# ԿՈՏՐԵԼ ՍՈԴՈՄԻ ՈԳԻՆ

*Ծննդոց 18-ը մեզ հայտնում է, որ Տերը և երկու հրեշտակներ այցելեցին Աբրահամին Սոդոմ քաղաք գնալու ճանապարհին: Նրանք կրկնեցին այն խոստումը, որ Սառան որդի կունենա, և հայտնեցին Աբրահամին, որ Սոդոմն ու Գոմորը կկործանվեն քաղաքների բնակիչների ամբարշտության պատճառով:*

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԾՆՆԴՈՑ 19:1-27

*1 Այն երկու հրեշտակները երեկոյան եկան Սոդոմ: Ղովտը նստած էր Սոդոմի դարպասի*
*մոտ: Ղովտը տեսավ և ընդառաջ գնաց նրանց և երեսնիվայր մինչև գետին խոնարհվեց: 2*
*Եվ ասաց. Իմ տերե՛ր, եկե՛ք, մտե՛ք ձեր ծառայի տունը և գիշերը մնացե՛ք: Լվացե՛ք ձեր*
*ոտքերը. առավոտյան վաղ վեր կկենաք և ձեր ճամփան կգնաք: Նրանք ասացին. Ո՛չ, մենք*
*գիշերը կմնանք փողոցում:*

- *Youth most often run away from home and become homeless due to family conflicts, abuse and/or neglect.*

*3 Ղովտը շատ ստիպեց նրանց, և եկան նրա մոտ ու մտան նրա տունը: Ճաշ պատրաստեց նրանց համար, բաղարջ թխեց, և կերան:*

- ***Տնային այցելությունների ծառայություն: Ղովտի նման, փորձիր այնպես անել, որ Տիրոջ ծառաները գան ձեր տուն՝ աղոթելու ձեր տան համար:***

*4 Բայց դեռ չէին պառկել, երբ քաղաքի մարդիկ, այսինքն՝ Սոդոմի տղամարդիկ՝ երիտասարդներից մինչև ծերերը, ամբողջ ժողովուրդը միասին շրջապատեցին տունը:*

*5 Կանչեցին Ղովտին և ասացին նրան. Ո՞ւր են այն մարդիկ, որ այս գիշեր քեզ մոտ եկան. նրանց դո՛ւրս բեր մեզ մոտ, որ գիտենանք նրանց:*

- *Ես շնորհակալ եմ Աստծուն, որ գիտեմ Հիսուս Քրիստոսի ճշմարտությունը*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր ծննդյան համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն Սուրբ Հոգու զսպող ձեռքի համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր մտքի համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր սրտի համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր հոգու համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր զորության համար*
- *Ես շնորհակալ եմ Աստծուն նոր նպատակի համար*
- ***Շնորհակալ եմ Աստծուն, որ մեռած եմ մեղքի համար և կենդանի եմ Քրիստոսով:***

*11 Եվ այն մարդկանց, որոնք տան դռան մոտ էին, ամենափոքրից մինչև ամենամեծը կուրացրին. այնպես որ շատ հոգնեցին դուռը փնտրելով:*

*4 Թագ. 6:17-18 – 17 Եվ Եղիսեն աղոթք արեց և ասաց. Ո՜վ Տեր, բացի՛ր սրա աչքերը, որ տեսնի: Եվ Տերը բացեց ծառայի աչքերը, և նա տեսավ... 18 Եվ երբ ասորիներն իջան Եղիսեին մոտիկ, նա աղոթեց Տիրոջն ու ասաց. Աղաչում եմ, այս ժողովրդին հարվածի՛ր կուրությամբ:*

*12 Մարդիկ ասացին Ղովտին. Ուրիշ էլ ո՞վ ունես այստեղ. փեսա, որդիներ, դուստրեր և*
*քաղաքում ով որ ունես, այստեղից դո՛ւրս հանիր, 13 որովհետև մենք կործանելու ենք այս*
*տեղը, քանի որ սրանց աղաղակը մեծ է Տիրոջ առաջ, և Տերն ուղարկել է մեզ, որ կործանենք*
*այնե: 14 Ղովտը դուրս ելավ և իր աղջիկների փեսացուների հետ խոսեց ու ասաց. Վե՛ր*
*կացեք, դո՛ւրս եկեք այստեղից, որովհետև Տերը կործանելու է այս քաղաքը: Սակայն փեսացուներին թվաց, թե նա կատակ է անում:*

- **ԱՍՏՎԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ԻՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՐԹՆԱՆԱԼՈՒ:**

*15 Երբ առավոտ եղավ, հրեշտակները շտապեցրին Ղովտին՝ ասելով. Վե՛ր կաց, ա՛ռ*
*կնոջդ և այստեղ գտնվող երկու աղջիկներիդ, որպեսզի չկորչես այս քաղաքի*
*անօրենության հետ: 16 <u>Եվ մինչ նա դանդաղում էր</u>, **այդ մարդիկ բռնեցին նրա**, նրա*
*կնոջ և նրա աղջիկների ձեռքերից և դուրս հանեցին նրան ու քաղաքից դուրս դրեցին (որովհետև Տերը ողորմեց նրան):*

*Յայ. 18:4 - 4 Եւ մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցըոր ասում էր. Դուրս եկէք դորանից, ով իմ ժողովուրդ, որ մասնակից չ՛լինիք դորա մեղքերին, եւ որ դորա պատուհասից չ՛ընդունեք.*

- **ԱՍՏՎԱԾ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒԺՈՎ ԴՈՒՐՍ ԿԲԵՐԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ:**

*Ա Թես. 4:16-18 – 16 քանի որ Տերն ինքը հրամանի ազդարարմամբ, հրեշտակապետի*
*ձայնով ու Աստծու փողի հնչմամբ երկնքից ցած կիջնի, և Քրիստոսով մեռածները նախ*
*հարություն կառնեն, 17 և հետո մենք՝ ողջերս, որ մնացել ենք, նրանց հետ միասին*
*ամպերի մեջ **կհափշտակվենք**՝ (Harpazo – taking by force) Տիրոջը դիմավորելու, և*
*այդպես ամեն ժամ Տիրոջ հետ կլինենք: 18 Ուրեմն միմյանց մխիթարե՛ք այս խոսքերով:*

*17 Եվ երբ նրանց դուրս հանեցին, նրանցից մեկն ասաց. Ազատի՛ր անձդ, <u>ետ մի՛ նայիր</u> և ամբողջ դաշտում <u>մի՛ կանգնիր</u>. փախի՛ր լեռը, որպեսզի չկորչես:*

*23 Արևը ծագում էր երկրի վրա, երբ Ղովտը մտավ Սեգոր:*

*24 Եհովան Սոդոմի ու Գոմորի վրա ծծումբ և կրակ թափեց Եհովայի կողմից՝ երկնքից: 25*
*Կործանեց այն քաղաքները, ամբողջ դաշտավայրը, այդ քաղաքների բոլոր բնակիչներին և*
*երկրի ամբողջ բուսականությունը: 26 Ղովտի կինը ետ նայեց և աղի արձան դարձավ:*

*27 Երբ Աստված այդ դաշտավայրի քաղաքները կործանում էր, Աստված հիշեց Աբրահամին.*
*և Ղովտին դուրս բերեց այդ կործանումի միջից, երբ կործանում էր այն քաղաքները, որոնց*
*մեջ բնակվում էր Ղովտը:*

- **ԱՍՏՎԱԾ ՀԻՇԵՑ ԱԲՐԱՀԱՄԻՆ.**
  - *Եւ Աստուած հիշեց Յոբին.*
  - *Եւ Աստուած հիշեց Նոյին.*
  - *Եւ Աստուած հիշեց Սառային.*
  - *Եվ Աստված հիշեց Ռաքելին.*
  - *Եւ Աստված հիշեց Աննային.*
  - *Եւ Աստված հիշեց Եղիսաբեթին և Զաքարիային.*
  - *Եւ Աստված հիշեց խաչի վրայի ավազակին.*

***երեք դաս Ղովտի կյանքից.***

1. **ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ:**
   - ***Դարձիր Աբրահամ քո կյանքում Ղովտերի համար:***

2. **ԶԳՈՒՇԱՑԵՔ ՄԵՂՔԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՑ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ:**

   *Բ Տիմ. 3:1-5 – 1 Իմացի՛ր սա. վերջին օրերին չար ժամանակներ կգան, 2 որովհետև*
   *մարդիկ կլինեն եսասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյող, ծնողներին*
   *անհնազանդ, ապերախտ, անմաքուր, 3 անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ,*
   *դաժան, անբարեսեր, 4 մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի հաճոյասեր, քան*
   *աստվածասեր: 5 Նրանք արտաքուստ աստվածապաշտ են, բայց*
   *աստվածապաշտության զորությունն ուրացել են. նրանցից խուսափի՛ր:*

3. **ԳԱԼԻՔ ԴԱՏԱՍՏԱՆՆ ԻՐԱԿԱՆ Է – ԸՆԴՈՒՆԵՔ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀԸ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ:**

   *Ծննդոց 11:7 – Եկեք իջնենք և այնտեղ նրանց լեզուն խառնենք, որ միմյանց լեզու չհասկանան:*

   *Ելից 19:18 – Սինա լեռն ամբողջովին ծխում էր, որովհետև Տերը նրա վրա իջել էր կրակով: Նրա ծուխը դուրս էր գալիս ինչպես հնոցի ծուխ, և ամբողջ լեռը սաստիկ ցնցվում էր:*

*Հովհաննես 1:14 – Եվ Բանը մարմին դարձավ ու մեր մեջ բնակվեց, և տեսանք նրա փառքը. փառք, որ Հորից ունի Միածինը՝ լի շնորհով ու ճշմարտությամբ:*

- ***Սա Աստվածաշնչում միակ հիշատակումն է այն մասին, որ Աստված այս աշխարհ է գալիս մարդկային մարմնով, առանց մարդկության դեմ դատաստանի:***

## Ի՞ՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: